

1918 թ

Ռ. ԼԵԲԵԴ


**ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ  
ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ  
ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ**

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՊՊԱՐԱՏԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ  
ԿԱԶՄԻ ՍՏՈՒԳՈՒՄՆ ՈՒ ԶՏՈՒՄԸ

1574

Ս. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1929



Ռ. ԼԵԲԵԴ

# ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱ- ՏՈՒՐԱՅԻ ԱՄՐԱԴՆԴՈՒՄԸ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՊՊԱՐԱՏԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ  
ԿԱԶՄԻ ԱՏՈՒԳՈՒՄՆ ՈՒ ԶՏՈՒՄԸ

15-748

A 8185




ՊԵՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒԹՅԱՆ ԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1929

1954

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ  
ԵՄԻՍԻՆԻՍԻՆԻ ՎԵՐԵՎՈՒՄ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ  
ԵՄԻՍԻՆԻՍԻՆԻ ՎԵՐԵՎՈՒՄ



2818  
F

ՊԵՏՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԻ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Գրանիւլ. 2706 (բ.)

Հր. 1050

Պատվ. № 848.

Տիրաւ 2000

## ՀԵՂԻՆՆԵՒԻ ԿՈՂՄԻՑ

Պրուլետարական դիկտատուրայի ասպարտաթի ամրացման հարցը մեր յերկրում սոցիալիզմի կառուցման հիմնական խնդիրն էրից մեկն է: Դրա համար ել անդախտի ակտուալութունն է ստանում և սոցիալիզմ կառուցող մասսաների մեջ անդախտի հետաքրքրութունն է առաջացնում մեր կուսակցության կողմից որակարգի խնդիր դարձված խորհրդային ծառայողների ստուգման և դաման հարցը:

Ներկա աշխատությունը զեկուցում է, վորը կարգացվել է վարչա-խորհրդային ծառայողների Համամիութենական կոնֆերանսում փետրվարի 4-ին և ապա բավականաչափ վերամշակվել, լրացվել է՝ հրատարակության համար և առանձին բրոշյուրով լույս տեսել «Մոսկովսկի Ռաբոչի»-ի հրատարակչության առաջարկով:

Բրոշյուրի նպատակն է ցույց տալ մեր պետական ասպարատի զեմքը, ինչպես վոր

նա կա, պարզում եւ այն պահանջները, վոր մենք առաջադրում ենք նրան, և այն մեթոդները, վորոնցով մենք պիտի ամրացնենք ալն ստուգման և զտման առաջիկա կամպանիայի ընթացքում:

Բրոշյուրը պետք ե նպաստի ներգրավելու ընթերցող-բանվորին ահալով մասնակցելու այն նախաձեռնումներին, վորոնց շնորհիվ պրոլետարիատի դիկտատուրան ազատվում ե մեր ապարատը քայքայող և կոմմունիստական հասարակակարգի կառուցման առաջխաղացման գործը դժվարացնող անհաշվազատ ու սողոսկած տարրերից:

## ԿԱՌԱՎԱՐԵԼՈՒ «ԱՐՎԵՍՏԸ»

«Առանց ասպարաատի մենք վա-  
ղուց կորած կլինե՞լինք, իսկ ա-  
ռանց սխտեմատիկ և համառ աշ-  
խատանքի ասպատատը բարելա-  
վելու համար՝ մենք կկործանվենք  
նախքան սոցիալիզմի համար բա-  
զա ստեղծելը»:

### ԼԵՆԻՆ

Տասը տարի չե անցել, չերբ լենինը  
պրոֆմիտու թյունների II Համառուսական հա-  
մագումարի իր յեղուլթում, ձևակերպելով  
պետութւն ղեկավարութւն գործում աշ-  
խատավորների առջև կանգնած խնդիրները,  
կոչ արեց՝

«Կործանել այն, ինչ դարերի և տաս-  
նյակ տարիների ընթացքում արմատա-  
ցել և բանվորական մասսաների մեջ, այն  
մասսակար նախապաշարմունքը, թե պե-  
տութւնը կառավարելու գործն ար-  
տոնչալնների գործն և, վոր դա ինչ-վոր  
արվեստ և (XVI, էջ 24)»:

Մատնանշված ժամանակաշրջանը բավական եր, վորպեսզի վոչ միայն առաջավոր ալլև բանվորութեան լայն մասսաներում և չքավորութեան ու բատրակութեան հսկայական խավերում ստեղծվեր լիակատար վրստահութեան դեպի իրենց իրավունքն ու պարտականութեանը՝ կառավարելու պետութեանը:

Բանվոր դասակարգը պետութեան կառավարելու արվեստը տիրապետեց թե փոքր և թե մեծ մասշտաբներով: Սկսած պատգամավորական ժողովներից և արտադրական խորհրդակցութեաններից, պատգամավորական լիազորութեան միջոցով խորհուրդներում, և վերջացրած պետական բարձր պարտականութեաններով ժողկոմատներում, տրեստներում և բոլոր խորհրդային հիմնարկներում, բանվոր դասակարգը հարյուրավոր ու հազարավոր ներկայացուցիչների միջոցով կառավարում ե իր պետութեանը: Մակայն ինքնախաբեութեան կլինեք պնդել, թե բանվորներին պետութեանը ղեկավարելու գործի մեջ և մասնավորապես պետական տպագրատի վերականգնմանը ներ-

զրնավելու գործում, վերջինիս պարզեցման  
 և եժանացման, մեր իրականության մեջ  
 մեծագույն չարիք հանդիսացող բյուրոկրա-  
 տիզմի դեմ պայքարելու իմաստով - ար-  
 վում ե ամեն ինչ և բավարար չափերով:

Կուսակցությունն ու արհմիությունները  
 հակապական աշխատանք են կատարել, վե-  
 րադաստիարակելով մասսաները, սովորեց-  
 նելով նրանց ըմբռնել, վոր չերկրի աըն-  
 տեսական և քաղաքական կյանքը ղեկավա-  
 րելու գործը կարող ե իրագործվել միմիայն  
 իրենց՝ բանվորական մասսաների միջոցով:  
 Սակայն պետական աշխատանքի գործնա-  
 ւանը ղեռնա հաճախ այնպիսի բյուրոկրատա-  
 կան խեղաթյուրումների չե հասնում, վորոնք  
 ուղղակի հակասում են բանվոր ու աշխա-  
 տավոր մասսաների շահերին:

Ներկայումս մենք տեսնում ենք դասա-  
 կարգային պայքարի սրումն յեվ հակա-  
 խորհրդային նահանջող տարրերի դիմա-  
 դրության ուժեղացում: Դա հետևանք ե  
 սոցիալիստական հաբձակման ֆրոնտում մեր  
 ունեցած հաջողությունների: Յերկրի ին-

դուստրիալիզացիայի ուժեղացումը, մաս-  
 նավորին տնտեսական կշանքից արտաք-  
 սումը և ժողանտեսութիան սոցիալիստա-  
 կան սեկտորի անընդհատ վերելքը—այս  
 բոլորն առաջ են բերել դիմադրութիան  
 փորձեր կուլակային-նեպմանական տարբե-  
 րի կողմից: Հակախորհրդային այս արամա-  
 դրությունները հաճախ իրենց հենարան են  
 գտնում մեր խորհրդային ապագարատի ներ-  
 սում, նրա այն տարրերի մեջ, վորոնք խոր-  
 հրդային ապագարատի ներքին մեխանիզ-  
 մին ծանոթ լինելով՝ ոպտագրծում են  
 այն թշնամական նպատակներով մեր գեմ:  
 Մենք ապագարատում ունենք նույնպես շատ  
 այնպիսի ծասույտներ, վորոնք, չնայած խոր-  
 հրդային իշխանութիան ակտիվ հակառա-  
 կորդները չեն, բայց, իրենց գասակարգային  
 ծագման հետևանքով, անկարող են մեր  
 ապագարատի միջոցով կուսակցութիան և  
 խորհրդային իշխանութիան գասակարգային  
 քաղաքականությունն անցկացնելու գոր-  
 ծում հենարան լինել: Միաժամանակ մենք  
 գիտենք, վոր շախտիի գործի դասերի հի-  
 ման վրա կուսակցությունը հայտնաբերից

«մեր աշխատողների կոմունիստական արթնության և հեղափոխական հոտառության բթացումը գասակարգային թշնամիների հանդեպ, անբավարար աշխատանք բանվորական մասսաներին արտադրության ղեկավարության գործում ներգրավելու»\*):

Այս բոլորը միասին վերցրած՝ հաճախ հասցնում ե գասակարգային գծի խեղաթյուրմանը ապպարատի աշխատանքի մեջ, դժվարացնում և պայքարը բյուրոկրատիզմի դեմ և դանդաղեցնում աշխատանքի տեմպը:

Ահա թե ինչու ծրագրված և արդեն վորսշ վայրերում իրագործվող խորհրդային ապպարատի ծառայողների կազմի զտումը քղխում և քաղաքական ամբողջ ներկա կացությունից յեւ հանդիսանում ե խոշոր քաղաքական խնդիր: Արհմիությունների VIII համագումարը, վորը կալացավ 1928 թ. ղեկտեմբերին, հովանութուն տվեց զուման անհրաժեշտությանը, վորպես պրոլետարա-

\*) Կենտկոմի բանաձևից—Շախտիի գործի մասին:

կան դիկտատուրայի ապաւարատի ամրացման միջոցի:

### ԸՊՊՍՐԸՏԻ ԱՂՏՈՏՄԸՆ ՈՐԻՆԸԿՆԵՐ

Խորհրդային որենքներն անց են կացնում կոմկուսակցության գլխավոր գիծը՝ ուղղված դեպի մեր յերկրի տնտեսության ավելի արագ, հաջող և բազմակողմանի զարգացումը, դեպի նրա հանրայնացումը և լայն աշխատավորական մասսաների կուլտուրական վերելքը: Ըստ վորում այս զարգացման մեջ ղեկավարող սկզբունքը հանդիսանում է՝

ա) Յերկրի սոցիալիստական ինդուստրիալիզացիան, գյուղատնտեսության նկատմամբ պետական արդյունաբերության, հատկապես ծանր արդյունաբերության դեկավարող և վերափոխող ղերի ուժեղացմամբ, վորը ամբողջ ապաւարատից պահանջում է ավելի ուժեղ աշխատանքի տեմպ այս ուղղությամբ:

բ) Բանվոր դասակարգի, գյուղի չքավորության և բատրակների դիրքերի ամրացումը:

գ) Բանվոր դասակարգի ու չքավորու-

թյան՝ միջակի հետ ունեցած դաշինքի ուժեղացումը:

Պետական ապագարատի աշխատանքի տասնյակ և հարյուրավոր դեպքեր կան թե կենտրոնում և թե տեղերում, չերբ սոցիալիստական շինարարության գործը խոչընդոտվում է, իսկ յերբեմն ել գիտակցորեն թուլացվում է ապագարատի բավական բազմաթիվ՝ մեզ խորթ և միանգամայն բարոյալքված՝ ծառայողների կողմից:

Մեզ մոտ, 283.849 պետական հիմնարկներում (այստեղ մտնում են բոլոր խորհրդային, տնտեսական և առևտրական հիմնարկները), համաձայն Սորաշխի կենտկոմի տվյալների, զբաղված են 2.192.865 ծառայող. դրանց կազմի մեջ զանազան կատեգորիաների նախկին պետական չինովնիկները, ցարիզմի ժամանակներում ծառայողներն զգալի քանակ են կազմում. Դա չերևում է առանձին հիմնարկների մասին չեղած տվյալներից: Այսպես, նախկին պետական չինովնիկներ Ֆինժոդկոմատի ծառայողների մեջ — 16,2<sup>0</sup>/<sub>0</sub>, դատական հիմնարկների ծառայողների մեջ — 8,3<sup>0</sup>/<sub>0</sub>, առևտրի

Ժողկոմատ. —  $5,4 \frac{0}{10}$ , գործկոմիներում —  $4,8 \frac{0}{10}$ ,  
 կենտրվիճվար —  $4,2 \frac{0}{10}$ , աշխտողկոմատում —  
 $3,9 \frac{0}{10}$  և այլն: Անհրատեշտ և ընդամին հաշ-  
 վի առնել և այն, վոր ներկա ծառայողնե-  
 րից մի մեծ թիվ նախահեղափոխական շրջա-  
 նում զանազան ասպարեկներում ու կազ-  
 մակերպություններում աշխատել են վոչ  
 վորպես պետական չինովնիկներ, այլ վոր-  
 պես սովորական շարքային ծառայող: Այս-  
 պիսով ցարի որոք զանազան հիմնարկների  
 ասպարատներում և կազմակերպություն-  
 ներում աշխատող ծառայողների տոկոսն ա-  
 վելի բարձր է: Այսպես, Ֆինժողկոմատի  
 գծով —  $37,3 \frac{0}{10}$ , առևտրի ժողկոմատի —  $27,7 \frac{0}{10}$ ,  
 դատական հիմնարկներում —  $22,2 \frac{0}{10}$ , գործ-  
 կոմիներում —  $17,0 \frac{0}{10}$ :

Անվիճելի չե, վոր ինչպես պետական չի-  
 նովնիկների առաջին խմբից, այնպես և  
 հատկապես նախահեղափոխական ժամանա-  
 կի զանազան հիմնարկների ծառայողների  
 չերկրորդ խմբից շատերն արդեն հարել են  
 խորհրդային իշխանությանը, սովորել են  
 աշխատել և աշխատում են ազնվորեն: Հե-  
 տևարաբ բերված տվյալները չեն ասուիս

աղտոտման պատկերը (այդպիսի հաշվառում ել չկա), այլ միմիայն մատնանշում են ցարական հիմնարկներում և զանազան հասարակական կազմակերպութ՝յուններում մինչհեղափոխական ստաժ ունեցող ծառայողների թիվը:

Աղտոտման փաստը կարելի չե պատկերացնել դեռևս աչն առանձին, հատուկաօր տվչալներից, վորոնք ստացված են ապագաբատի մասնակի դտումների հետևանքով: Ահա, որինակի համար, վորոշ տվչալներ հողային որգանների կազմի նկատմամբ:

Ներքին-Վոլգյան մարզում յերեք շրջաններում ստուգված են 536 մարդ: Գրանցից ԲԳՏ-ի և պրոֆմիությունների կողմից վորոշված և հանել աշխատանքից 146 հոգուկամ  $27,2\%$  այդ հանվածների թվում նախկին ակտիվ սպիտակ զվարդիականներ — 17 մարդ և բյուրոկրատացածներ — 45 մարդ:

Ուկրայինայում մի շարք հողալին հիմնարկներից հանված են 132 մարդ, դրանցից ակտիվ սպիտակ զվարդիականներ — 86 հոգի, նախկին ժանդարմներ ու կալվածատերեր — 34 հ., խոշոր սևփականատեր ար-

դիունարեւոյներ — 3: Հողժողովոմատի ապարատի նկատմամբ 329 հոգուց նախկին ազնւականներ — 13 հ., կալվածատերեր — 6 հ., վաճառական — 6 հ., հոգևորականութիւն — 15 հ., զանազան շինութիւններ — 10 հ., սպիտակ ոֆիցերներ — 9 հոգի:

34 նահանգներում և շրջաններում արդէն կատարված դոման տվյալների համաձայն ստուգված են 100.000-ից ավելի ծառայողներ: Զտված-հեռացված են 18.041 մարդ, այսքանից բւերոկրատիզմի համար — 485 մարդ, վատնումի և կաշառակերության համար — 689 մ., նախկին վոստիկանության և ժանդարմերիայի աստիճանավորներ — 587 հ., հոգևորականներ 1094 հ., կալվածատերեր և կուլակներ — 583 հ., վորպես անհարազատ տարր — 7181 մարդ: Այս շարքում են և կեղծ մասնագետները և իրենց պարտականութիւններին անբարեխիղճ վերաբերվողներն ու խորթ ծագումի տեր մարդիկ, նախկին տիտղոսավոր անձինք՝ իշխաններ, գրաֆներ, հին ժամանակի զանազան բարձրաստիճան մարդիկ և այլն:

Ապագայի ազտոտման լուսաբանության

համար բերելով այս թվերը, մենք առայժմս  
չենք քննում այն հարցը, թե վորչափ ճիշտ  
ե զրանց բոլորին խորհրդալին ապարա-  
տից վտարելը միմիայն վերոհիշյալ կատե-  
գորիաներին պատկանելու նշանով: Այդ մա-  
սին դեռ կխոսենք: Սակայն, այնուամենայ-  
նիվ, լեթե յենթադրել, վոր զրանցից վո-  
մանք չպետք է դավեն-հեռացվեն, սպա և  
այդ դեպքում ել մեր ապարատում վերո-  
հիշյալ կատեգորիաներին պատկանող այդ-  
չափ բազմաթիվ մարդկանց գոյության  
փաստը բավական ե՛նրա ազտությամբ լինե-  
լու չափը ցույց տալու համար:

Ահա և՛ ազտությամբ փաստեր, արդեն  
անձնավորութունների վորոշ բնութագը-  
րով, համաձայն մեր պարբերական մամու-  
լի տվյալների և ԲԳՏ նյութերի:


**«Սերգիյեվսկի գավառում նախկին մար-  
դիկ ամուր նստած են.**— հիվանդանոցի տըն-  
տեսի պաշտոնում աշխատում և զրաֆ Շիդ-  
լովսկին: Այդտեղ ել ծառայում եյին Վեր-  
խովսկայան, իշխանուհի Տուչկովա և թեյի  
գործարանատիրոջ տղա Վխոսցկին: Թան-  
դարանները դեկավարվում և գլխավորվում

են քրաֆ Ուսուֆչեի, բարոն Դեբլիդի, իշխանուհի Շախովսկայայի կողմից, Տյուշենբերի, Մամոնտովների, Մորզվինների և այլ սրանց նման կալվածատերերի կողմից»։ («Известия ЦИК» 10/II 29 г.): «Վալդայի շրջագործկոմսոմ հաշվապահի պաշտոնով ծառայում եր նախկին փոխ-նահանգապետ Պոպովը, վորը դեռ ապահովագրված եր սոցապի կողմից թոշակադրամով, իսկ հիվանդանոցում հաշվետարի պաշտոնով ծառայում եր նախկին պրիստավ Լոկոտսկին։ Բժշկա-սանիտարական միության մեջ աշխատում ե պրիստավ Կամայևի վորդին, բացի այդ, կալվածատերերն ու ձայնագուրկներն աշխատում են կոոպերացիայում» («Красная Искра»):

**Իրկուսսկի ցրչաք.** — «Տրեստի գլխավոր հաշվապահը ուսս ժողովրդի միության նախկին անդամն է, Կոլչակի մոտ յեղել է վաշտի հրամանատար, սպիտակ բանակի սպա-կոպիտ և խորթ տարր է, վորը քայքայում է ապպարատը։ Ստատիստիկն ազնվական է, յենթազնդապետ ցարական և սպիտակ բանակների, կոյսրուհի Մարիա Ֆեոդորով-

հայրի սանիկը, վոչ միութեան անդամ: Տրեսաթի հաշվապահն ակաթիվ աշխատում էր կուլչակի ժամանակ. մասնակցել է բայլչե-վիկնեբրին դանակոճիլուն և գնդակահարում-նեբրին»:

**Աստախան.**— «Նովոսիբիրի շրջանային ֆինբաժնի հարկային ազենա Յարոսլավցև կուլչակի պատժիչ խմբումն և չեղել, ինչպես և խորհրդային իշխանութունը տապալող կազմակերպութունում: Յեղել է դատապարտված 5 տարով: Յերկու անգամ ներում և ստացել. դատապարտված տարինեբր լրիվ չի նստել: Միլիցիայի գաման ժամանակ խորհրդային ապստամբից արտաքսվել է 1924 թվին, առաջին կատեգորիայով: Խորհրդային իշխանութեան հանդեպ ունեցած վերաբերմունքը թշնամական է: Յարական ժամանակի դատախազ Բրունչտիյնը, վորը չեղել է կազետական կուսակցութեան նախկին կազմակերպիչը, սամուսնացած և նախկին մինիստր Շչեգլովիտովի բարեկամուհու հետ, ներկայումս աշխատում է Պոչեպ քաղաքում պաշտպանների կուլչեգիայում, վորպես անդամ»:



**Յակոբ Սիալուսի.** — Ռ.-ն Պետապլանի նախագահության անդամ է, վորը 1903 թվին լինելով անլեզալ խմբակի անդամ՝ մատնել է վերջինիս: 1916 թվին չեղել է վոսկի արդյունաբերողների համագումարի նախագահ, 1918-ին — Բլագովիշչենսկի զեմսկի ինքնավարության նախագահ, նա ոժանդակել է կենտրոնական Սիբիրի աշխատողների խումբի ձերբակալմանը և գնդակահարմանը: Նույն հիմնարկութունում վորպես մեքենագրուհի աշխատում է մի վաճառականի աղջիկ, բալլէտիկների կողմից 1921 թվին գնդակահարված վոստիկանապետի կին, վորը ներկայումս էլ սպեկուլյանտի կին է: Կոլչակի ժամանակ աշխատել է շրջանային միլիցիայում, ուր կատարել է հակահետախուզության ֆունկցիաները:

**Թիֆլիս.** — Անդրկովկասյան չերկաթուղիների վարչութունում աշխատում է Ալեքսանդրովսկին, վորը ուսւ ժողովրդի միության ակտիվ անդամն է չեղել, և վորի մասնակցությամբ 1905 թվին Ռուսթավելու պրոսպեկտում գնդակահարման չենթարկվեց ազգարնակութունը:

**Սեվաստոպոլ.** — Ռալոնական ֆինրաժնում աշխատում ելին՝ Դ., նախկին ստատսկի սովետանիկ, վորը սլարգևատրված ե չորս շքանշաններով և յեղեկ ե սպիտակների մոտ. նույն հիմնարկության մեջ աշխատում ե և Բ., վորը Վրանգելի ժամանակ ծառայելիս ե յեղեկ քաղաքային վարչությունում:

**Ջոլոզդա.** — Նահանգային վիճակագրական բաժնում աշխատում ե նախկին պատվավոր քաղաքացի Տ., վորը ծառայել ե սպիտակների մոտ և պնդակահարել բանվորներին: Պ., նախկին շինոմիսիկ և և Վոլոզդայի բանտի պետի ոգնական: Հիշված հիմնարկությունում աշխատում են 12 հոգի, վորոնց ծնողները տերտերներ են («Կարմիր հյուսիս» 8/1 1929):

Յեթե թվենք բոլոր նախկին մարդկանց, վորոնք թե առանձին-առանձին և թե ամբողջ խմբերով տեղ են գտել մեր ապագա բատում, և վորոնց մի մասը ներկայումս արդեն տեղ-տեղ գտված ե, իսկ մյուս տեղերում սպասում են իրենց անխուսափելի գտման, — ասլա կարելի չե մի հսկայական հատոր կազմել: Մակայն հենց բերված ո-

րինակներն ել բավական են, վորպեսզի հասկանալի դառնան անհանգստության այն պատճառները, վորը հայտնաբերում ե կուսակցությունը ամբողջ ժամանակ ե, մասնավորապես վերջերս, մեր ապագարատի ամբության-տոկունության վերաբերյալ: Իսկ չեթե հաշվի առնենք պրոլետարական ե կուսակցական մասի անբավարար քանակը, ավելի պարզ կլինի, թե ինչու զանազան աղավաղումների, մանավանդ դասակարգային աղավաղումների նկատմամբ ասպարեատի դիմադրությունը պետք չեղած չափով չի հայտնաբերվում: Ահավասիկ միքանի թըվական տեղեկություններ Ուկրայինայի 47 կենտրոնական ե 28 շրջանային հիմնարկների ծառայողների սոցիալական ե կուսակցական դրության վերաբերյալ\*):

1928 թվին այդ հիմնարկներում ծառայել են 3822 հոգի, վորից 410-ը (10,7%) չեղել են նախկին բանվորներ, 337 մարդ (8,8%) — նախկին գյուղացիներ, իսկ այլքը, այսինքն՝ ծառայողների, բուրժուազիայի ե

\*) Ռ. Ն. Ֆ. Ս. Հ. վերաբերյալ ճիշտ տվյալները բացակայում են:

մանր բուրժուազիայի միջավայրից դուրս  
 յեկաճանքի թիվն և յեղել 3075 կամ  $80,5\%$ ։  
 Այդ ծառայողների թվում կուսակցական-  
 ների կորիզը կազմում և — կուսանդամներ և  
 թեկնածուներ 1095 հոգի կամ  $28,6\%$ ։ Կոմ-  
 յերիտականներ — 97 կամ  $2,2\%$ ։ անկուսա-  
 կցականներ — 2657 կամ  $69,2\%$ ։ Այս շար-  
 քից մինչև հեղափոխությունը ծառայողներ  
 են յեղել 2089 կամ  $78,8\%$  ք։

Սոսելու կարիք չկա այն մասին, վոր  
 ծայրագավառներում, մանավանդ վոչ ար-  
 դյունաբերական շրջաններում, պետական  
 ապարատի ծառայողների թեսոցիալական  
 և թե կուսակցական դրուժյան պատկերն  
 ավելի անմխիթար և, քան Ուկրաինայում։  
 Որինակ, Բաշկիրիայում, վազուց չե, վոր գո-  
 յություն ունեյին ամբողջ հիմնարկներ,  
 վորտեղ աշխատում էին 2—3 կոմմունիստ։

Բերենք մի քանի որինակներ ստորին՝  
 գյուղական ապարատի ադոտուման վերա-  
 բերյալ։

**Նուսկի քառն** — Սրեզնիյ Բասխովեց  
 գյուղը։ Սորհրդի 33 անդամների մեծագույն  
 մասը նախկին կուլակներ են։ Հարկային

հանձնաժողովի մեջ և առևտրական կ., վորը զրկված և ընտրական իրավունքներից. նա իր պաշտոնավարության ժամանակ թագգրել և ազգաբնակչության հարուստ շերտի տուրքադրման որչեկտները: Կ. շարունակ ընդառաջում և կուլակներին՝ տալով վկայականներ սերմ ստանալու համար—այն ժամանակ, չերբ չքավորները վոչինչ չեն ստանում:

**Ռոստով Գ/Վ.** — Շախտինսկի շրջանի (Սուլինսկի ույունի) Վլադիմիրսկի ստանիցայի խորհրդի 19 անդամների մեջ չկա վոչ մի կուսակցական և վոչ մի կոմյերիտական. բոլորը նախկին սպիտակ-գվարդիականներ են: Կանանց ներկայացուցիչը գյուղխորհրդում սպիտակ սպայի կին է: Վերաստուգիչ հանձնաժողովի անդամներ են գնդապետ Լուկյանենկոն և մի ուրիշ նախկին ատաման՝ սպիտակների մոտ ծուռայած Ռաստերնյովը, վորը սողոսկել և խորհրդի մեջ, անց երկացնում իր կուլակային գիծը՝ աղավաղում եր հարկային սխտեմը և վոտի տակ ժալիս չքավորության շահերը («Մոլոտ» 24/XII 1928 թ.): Այս որինակները խիստ շատ են: Բավականանանք այսքանով:

Մեզ մոտ, ապալարատում, աշխատում են բազմաթիվ ձայնագուրկներ, վորոնք չիրբեմըն կոոպերատիվ կազմակերպություններում ղեկավար պաշտոններ են գրավում և հետևաբար լի հնարավորություն ունեն ազդել մեր կոոպերատիվ քաղաքականության վրա: Ողեսասայից հայտնում են, վոր կենտրոնական բանվորական կոոպերատիվները 2000 աշխատակիցներից 200-ը ձայնագուրկ են: Քիչ չէ վերջինների թիվը և գյուղական կոոպերացիայում ու հողային որգաններում: Այնպես է լինում, վոր մարդիկ, վորոնց մասնակցությանը մեր պետական շինարարության մեջ մենք քաղաքական անվստահություն ենք հայտնում, նրանց դասակարգային թշնամության, սոցիալական վտանգավորության պատճառով (վորպես նախկին հանցագործներ և այլն), կարող են ազդել կոոպերատիվ շինարարության վրա, մինչդեռ վերջինս կապված է միլիոնավոր մասսաների շահերի հետ: Պարզ է, վոր զլաման ժամանակ պիտի շատ ուշադիր մտանալ հիշված կատեգորիային և շատերին գտել:

## ՊԵՍԵՆԿԱՐՊԵՏԻՆ ԳԺԻ ԽԵՂԵԹՅՈՒՆՆԵՐԸ

Կարելի՞ ցե արդյոք ապագաբաժնի իր աշխատողներին այսպիսի կազմով համարել լիովին պիտանի և ընդունակ վճռական հակահարված տալու այն ուժերին, վորոնք գալիս են դրսից և թշնամարար են արամադրված պրոլետարիատին: Արդյոք բավականաչափ ամճեր և պրոլետարական դիկտատուրայի գործիքը, վորպիսին և խորհրդային ապագաբաժնի, ավելի հաջողութչամբ կառուցելու սոցիալիզմի շենքը ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում: Իհարկե վոչ: Պրոլետարիատին թշնամի ուժերը հաջողութչամբ հազար ու մի մանր ու խոշոր խոչընդոտներ ու արգելքներ են հարուցում սոցիալիզմի կառուցման գործին, հենվելով մեզ համար խորթ մարդկային խավի վրա: Ինչո՞ւն և արտահայտվում այդ թշնամական ազդեցութչունը:

Ահա ձեզ Սմոլինշչինան: Բերենք իր ժամանակին հետադատողների կողմից հաստատված փաստերը:

Կարգիմովսկու շրջկոմի քարտուղարն

դրադժուժ եր հարբեցողութ՛յամբ, «կոմժու-  
նա» յեր կազմակերպել իր հետ խմող ըն-  
կեր աղերքից: Նրա կամայանխաջի մեջ ելին  
մանուժ՛ շրջարոճկոմի փոխ-նախագահը,  
կուսանդամ, «Ֆակել» կոմժունայի ան-  
դամ, նախկին շրջործկոմի նախագահը,  
նախկին միլիցիայեալը, կուլակը, նախկին  
կալվածատերը, գինեատուս պահողը և այլ  
քրեական ելեմենտներ:

Նշանակուժ ե՛ նախկին կոմժունիստներ,  
նախկին կալվածատերեր, կուլակներ, ողի  
վաճառողներ և այլ քրեական տիպեր—ահա  
թե ումից եր կազմված կադիմժակի շրջանի  
իշխանութ՛յունը:

Նույնպիսի կազմալուժիչ պայմանների  
շնորհիվ Սպասակի կոմյերիտմիութ՛յան բը-  
ջիջում բջիջի քարտուղարը, Համկոմկուսի  
թեկնածու, շրջործկոմի փոխ-նախագահի  
լեղրայրը մխացել եր մի բանդալի, վորի ձեռ-  
քով խողխողվել եր 7 հոգուց բաղկացած  
մի ընտանիք: Հանցավորին հաջողվուժ ե  
փախչել: Փախչել կարողացավ նրա համար,  
վոր իշխանութ՛յունը նրան ազատեց - նա  
կուսեր դուներ, իսկ բնակչութ՛յունը փախե-

ցավ աջակցել բանդիտի ձերբակալմանը, վախենալով ալդ կապերից:

**Սմոլեհնսկի ցահագ** — կրժիվիցկի, հողաշինարար, 1879 թ. ծնված, նախկին ազնւր-վական, Սմոլեհնսկի նահանգի կալվածատեր: Մինչև հեղափոխությունն ուներ իր կալվածքը, ներկայումս ունի իր տնտեսությունը, վորն ինքն իր ձեռքով և կտրել վերցրել իր աներոջ նախկին կալվածքից. հողաշինարարական աշխատանքների ընթացքում ստեղծել եր վալակիտա. բազմաթիվ անգամներ նկատողության և վարչական տույժի յե յենթարկվել անհաջող աշխատանքի համար: 1927 թ. Սմոլեհնսկի նահանգի դատարանի նստաշրջանի կողմից դատապարտվել և 2 տարվա բանտարկության իխտ մեկուսացմամբ և դրանից հետո յել մեկ տարվա իրավազրկման պաշտոնի մեջ կատարած կեղծիքի համար. հողաշինարարությունն անց եր կացնում ի վրնաս չքավորության, վորը անդիք եր տալիս գլուղացիների դժգոհությանը խորհրդացին իշխանությունից:

Սմոլեհնսկի գավառում չքավորական

Ֆոնդից փողերը բաշխվում էլին ունեոր-  
ներին, չգանձված պարտքի դիմաց վաճառ-  
վում եր չքավորներին գուլքը: Իսկ միքանի  
կոոպերատիվներում նստելիս են չիդել  
նախկին կալվածատերերը:

Լյուբավնիչհսկի շրջանի շրջկոմի նախ-  
կին քարտուղարը (1925 թ.) ներկայումս  
ընկերովի տիրում է մի մեծ ջրաղացի, իսկ  
շրջկոմի մյուս նախկին քարտուղարը (1926  
թ.) հարբեցողությամբ եր պարապում պետ-  
սպիրտի խանութի վարիչի հետ, «աշխա-  
տելով» մինչև վատնումները: Հարբած վի-  
ճակում նա չերվոնեցներով իր կոշիկների  
կեղտն եր մաքրում: Յարցնակի գավառի  
շրջաններից մեկում սերավարկի ընկերու-  
թյան ղեկավարներն էլին ութը նախկին  
կալվածատերեր, չերկու տերտերի տղաներ,  
յերեսփոխը, յերեք նախկին ուրյադնիկներ  
և դրանց հետ ել խոշոր կուլակներ: Այդ  
ընկերության մեջ վարկավորվում էլին  
միայն նախկին կալվածատերերը:

Այստեղ մենք տեսնում ենք, թե ինչպես  
թշնամի ուժերն ապպարատի աղաճուման  
և սողուկած կոմմունիստների միջոցով

կազմակերպված ու վստահորեն գնացել են խորհրդային իշխանության քաղաքականության դեմ, վոչ միայն աղավաղելով այն, այլ նրան հակադրելով իրենց կուլակային-կալվածատիրական շահերը, հանուն վերինրանք քանդում էլին խորհրդային քաղաքականութունը գլուղացիական լայն մասսաների մեջ, խորհրդային իշխանության հեղինակութունը խախտելու նպատակով: Մեր հարկային քաղաքականությունը խեղաթյուրվում և Անա և որինակ մեր քաղաքականության աղավաղումներից խորհրդային տնտեսությունն ենք:

Մերգործըսկու պետ-սերմ-կուլտուրայի տնտեսության վարիչը, վորն առաջնորում յեղել և կալվածատիրական տնտեսության կառավարիչ, խորհրդային իշխանությանը խորթ տարր, գործը վարում էր անտնտեսաբար, աշխատանքի մեջ տեղավորելով իր ազգական նախկին կալվածատերերին. իր կնոջը, վերը նախին կալվածատերի աղջիկ և, տեղավորել և ողերևութաբանական կայանում՝ դիտողի պաշտոնով: Հացամթերման կամպանիայի ժամանակ 8

տոննից ավելի հաց ե թագցնում, ճնշում ե բանվորներին և այլն:

Նույն բանը նկատում ենք և միջանկիռականտեսություններում:

Բաղլիչա գյուղում (Ջանքոյսկի ուսու- նում) հողոգտագործման «Աշխատավոր» ընկերության մեջ մտել են յերկու նախկին կալվածատեր իրենց տրակտորով: Ընկերու- թյունը վարկեր եր ստացել վերանորոգու- թյան համար: Տրակտորը վերանորոգվում ե, ըստ վորում այդ վարկերը պետք եր վե- րադարձնել աշնանը: Այս նախկին կալվա- ծատերերը, չսպասելով աշնան, հենց անմի- ջապես չքավորներից գանձեցին տրված վարկերը: Իրենց ձիերը միության սշխա- տանքի համար չեյին ուսլիս՝ հայտարարելով, վոր ձիանքն զբաղված են\*):

Մեզ հայտնի չե, վոր վարկավորման գը- ծով չքավորությանը տրվող արտոնու- թյունների մասին լեզամ որենքը հաճախա- կի խախտվելիս ե յեղել: Պատահում եր

\*) Բոլոր տեղեկությունները վերցված են տեղա- կան ԲԳՏ-ի նյութերից:

մինչև իսկ, վոր վարկերի 40—60<sup>0</sup>/<sub>0</sub>-ը հասնում եր վոչ թե չքավորությանը, ալլ միջակհաներին, իսկ յերբեմն ել կուլակներին:

Յեթե անդրադառնանք մեր պետության սոցիալատանքի այնպիսի կարևոր բնագավառին, վորպիսին ե սոցիալիստական ապահովագրությունը, ապա մենք այստեղ ել քիչ դեպքեր չենք նկատում, յերբ նախկին գեներալներ, կալվածատերեր, դասուպան չինովսիկներ կամ նրանց կանայք կենսաթոշակ են ստանում:

Գլուղում մեր խորհրդային ապարատն ավելի չե խոցիլի. այնտեղ դասակարգայնորեն թշնամի ուժերի համար ասպարեզն ավելի քան լացն է: Կուլակը, նախկին կալվածատերը, տիրոտերը, պետլյուրականը կամ կոլչակայինը, ռեակցիոն կոոպերատորը, նախկին վաշխառուն և առաջներում գլուղացուն ճնշողների մի ամբողջ վոհմակ աշխատում են ոգտագործել ամեն մի ժամանակավոր դժվարություն և բոլոր միջոցներով, առաջին հերթին խորհրդային հիմնարկների գործունեյության վարկարեկումով՝ գլուղացիության տրամագրությունն ուղղել սոցիալիս-

տական շինարարության դեմ: Բայց և քաղաքում ել քիչ չեն դասակարգալին զծիխեղաթլուրման կոնկրետ փաստերը: Հարկալին բնագավառում, սոցիալական ապահովագրման և առողջապահության գործում և մեր աշխատանքի մի շարք բնագավառներում անհարազատ և բլուրոկրատ շինոմիսիկներն իրենց գործունեությամբ թուլացնում են պետապոլարատը: Այսպես, որինակ, գործնականում, հարկալին բնագավառի քաղաքականութունը գտնվում և անհարազատ տարրերի ձեռքում և ուղղված և մեր դեմ: ԽՍՀՄ-ի Ֆինստոլկոմատում չեկամտալին հարկերի հրահանգիչ Մ. Չանում եր մանիֆեստով ազատել «վոչ-աշխատավորական» խմբին պատկանող, խոշոր հարկերը լրիվ չմուծողներին և միաժամանակ կատեգորիկ կերպով առարկում եր շեֆընկերություններին վորևև կիրպ հարկից ազատելու դեմ, իր ալդ առարկութունը հիմնավորելով բլուջեյի լարվածությամբ:

ՌՄՖԽՀ-ի Ֆինստոլկոմատի պետհարկի պատասխանատու աշխատակից Գ.Ն կապուներ Մոսկվալի առևտրական Բ. ի հետ,

վորով և վերջինիս հարկն իջեցվում է: Վարչության պետի ոչնական Ս.-ն զատապաշտպաններին կողմնակալի անդամ Ռ.-ի միջոցով միջնորդում է տուրքից ազատելու անտրական Գ.-ին: Ս.-ն ազատեց տուրքի ապաստիկի համար վաճառքի չենթակա կոստրումից անտրական կոնտորովիչի տունը վճարի ժամկետը 10 ամսով յերկարացնելու միջոցով: Նույն ձևով բավարարվել է Տուլա քաղաքի անտրականուհի Մ.-ի միջնորդութունը: Ս.-ի հեռախոսային կարգադրությամբ Մոսֆինրաժնի կողմից ապորինի կերպով ներվում է (կամ վերացվում) անտրական Ռատներից շգանձված տուրքը՝ 4.507 ուրլի՝ իբրև թե նրա անկարողության պատճառով, մինչդեռ նա «Ռոզնիչնիկ» ընկերության վարչության անդամ էր և Մոսկվայի փոխադարձ վարկի անտրատորդունարերական ընկերության խորհրդի անդամ:

3-րդ թաղամասի ֆինտեսչի կողմից ներված է (կամ վերացված) Մոսկվայում սննդամթերքների գործարանատիրոջ՝ Բելենկիին նրա 1926/27 և 27/28 թ. թ. 75 հազար

ոուրլի պրոմիսլովի և յեկամտային հարկը, չնայած նրան, վոր այդ ձեռնարկությունը մինչև այժմ ել աշխատում ե 50 հազար ոուրլի յեկամտով (իրեն ձեռնարկության գրքերի համաձայն):

Բացի մեր որենքների դասակարգային խեղաթուրման ալս որինակներից, որենքների իրագործման դանդաղությունը, ձրգ-ձրգումները, բյուրոկրատիզմը— այս բոլորը մեծ չափերով հետևանք են մեր ապպարատի անձնական կազմի աղտոտման:

### ՈՒՄ ՅեՎ ԻՆՉՊԵՍ ԶՏԵԼ

Պետական, կոոպերատիվ և վարչական ապպարատի անձնական կազմի ստուգումն իրեն նպատակ պետք ե դնի ալս ապպարատի առողջացումն ու ամրացումը, նրամաքրումը անպիտան, սոցիալապես անհարգատ ու անբարեհույս բյուրոկրատ տարրերից և ուղղելու իմաստով:

Ապպարատի դասակարգային հզորությունն ամրացնելու յեՎ վլասարար տարրերի համար յեղած հնարավորությունները վերացնելու նպատակով ստուգման

ընթացքում հատուկ ուշադրութիւն պետք  
ե դարձնել բանվոր դասակարգին թշնամի  
բանակից դուրս յեկածներին վրա:

Նախկին կալվածատերերը, կապիտա-  
լիստները, ցարական և սպիտակների կա-  
ռավարութիւնն բարձրաստիճան շինովները,  
հակահեղափոխութեան դեկաւտրներն  
ու ակտիվ գործիչները, հոգևորականու-  
թիւնն ու այլ ձայնազուրկները, — այս բո-  
լոր մարդիկ պետք ե ամենամանրազնին  
ստուգման առարկա դառնան, քանի վոր  
հազիվ թե գտնվեն խորտակված պետական  
բուրժուական աղպարատի այդ մնացորդ-  
ներից փոքրիշատե զգալի թվով մարդիկ՝  
խղճի մտք աշխատող խորհրդային իշխա-  
նութեան համար: Նրանց մեծամասնու-  
թիւնը պասսիվ, իսկ չերբեմն ել ակտիվ  
կերպով աշխատում են պրոլետարական  
դիկտատուրայի դեմ: Իսկ նրանց, վորոնք  
ամբողջովին անցել են խորհրդային իշխա-  
նութեան կողմը, դժվար չե, ստուգմանը ու-  
շադիր վերաբերմունքի դեպքում (իսկ դա  
առաջին և գլխավոր պայմանն ե), ճանաչել  
վորպես բարեկամների և մեզ համար

ոգտակար աշխատակիցների: Այն անձինք, վորոնք չեն ցանկանում կիրառել խորհրդադալին որենքները, այդ որենքների խեղաթյուրողները, կազմալուծված աշխատողներն իրենց գործողություններով խորհրդադալին իշխանությունը վարկարեկողները, չարամիտ բյուրոկրատները, ձգձգողները, վատնողները, կաշառակերները, մեզ դասակարգաչնորեն խորթ տարրերի հետ կապվածները և այդ կտպն իմնաս խորհրդադալին իշխանության ոգտագործողները, — դրանք բոլորը պետք և զտվեն խորհրդադալին սպալարտախց:

Կարո՞ղ ե արդյոք դո՞ման միակ և գլխավոր նշանը վոչ պրոլետարական սոցիալապետ խորթ ծագումը համարվել: Իհարկե վոչ: Մեզ թվում ե, վոր վերը թված անձինք պետք և զտվեն անկախ իրենց սոցիալական ծագումից, ալլ փաստորեն մեր գործին մնատարեր այն ազդեցության հիման վրա, վորը նրանք կիրառում են աշխատելով պետասպալարտում:

Ազնվական, իսկ առանձին գեսպերուս և կարվածատիրական ծագումը չի կարող

գտման համար վճռական նշտն լինել: Իրենց  
 գիտությամբ և փորձով ոգտակար և բարե-  
 խղճորեն իրենց պարտականութունները  
 կատարող մասնագետները չպետք է ընկնեն  
 գտման յենթակա անձնավորութունների  
 կատեգորիայի մեջ, մինչև իսկ այն դեպքում,  
 յեթե նրանք անցյալում թշնամանք են  
 հայտնաբերել դեպի պր.:լիտարական պետու-  
 թյունը, իսկ ներկայումս հիմք չկա վնասա-  
 կար համարել նրանց ներկայությունը  
 ազգարատում: Ընդհակառակը, վորպես  
 իրենց գործը գիտցող մասնագետներ, նրանք  
 պետքական են և ոգտակար, գտումը նրանց  
 չպիտի ձեռք տա:

Վոչ մի ըոպե գտումը չպիտի թուլացնի  
 ասպարստի ստեղծագործական կարողու-  
 թյունը, կազմալուծի հիմնարկների աշխա-  
 տանքը. սա ստուգումը կազմակերպելու  
 հիմնական պահանջն է: Հատկապես ուշադիր  
 վերաբերմունք պիտի հայտնաբերվի տար-  
 բեր ասպարեզների մասնագետների նկատ-  
 մամբ:

Նրա համար, վորպեսզի օրինակներով  
 պարզենք, թե ինչպես չպետք է հասկանալ

զտումը, բերենք ստուգման ընթացքում կատարված միջանի սխալմունքի դեպքեր, մասամբ պատահական, իսկ մասամբ ել դեպի ստուգումն ունեցած սխալ մոտեցման հետևանքով:

Կոլչակի կողմից մորթիլիզացիայի չենթարկված նախկին սպիտակ սպա, աշխատում է սպակու գործարաններից մեկում: Լավ աշխատող, կոշկակարի վորդի չե, ծառայել է Կարմիր բանակում վորպես կամավոր, հանվում է աշխատասեղից վորպես նախկին սպիտակ ոֆիցեր, հակառակ նույն այդ գործարանի 145 բանվորների բողոքին:

Հարկային տեսուչ, վորը խորհրդային իշխանութւան որոք աշխատել է 10 տարուց ավելի և չեւանդ է հայտնաբերել աշխատանքի մեջ, հեռացվում է աշխատանքից վորպես նախկին չինոֆիլի տղա և նախկին ոֆիցեր (սպա) (նա 1917 թ. հոկտ. 1-ի արձակման պրտպորշիկ է), չնայած պրոֆմիու թւան կազմակերպութւունների բողոքներին:

**Նովորոսսիյսկում.** կրտսեր միլիցիոներ, սրանից 25 տարի առաջ չերեք-չորս ամիս

ծառայել և վորպես քաղաքային պահակ (վոստիկան), դասվել և խորհրդային իշխանության ակտիվ թշնամիներ շարքը:

Ելեկտրոմոնտյորը, վորը չի բաժանորդադրվել ինդուստրիացման փոխառությանը հանձնաժողովի կողմից «դեղին տոմս» և ստացել: Շոֆերը հանվում և աշխատանքից նրա համար, վոր «մի ժամանակ և իբր թե ինչ-վոր մեկից մեքենա չե գնել (վորը մինչև իսկ չի չել ստուգվել):

Նովոչերկասկի կոմսունալ բանկում գտման նախապատրաստական չեռյակը առաջարկել և արձակել ծառայողներից մեկին: Պատճառը: «Դուրս և գալիս խորհրդային իշխանության և ՄՈՊՐ-ի դեմ: Հրավիրում են շրջանային (округ) կոմիտսիան, նա հերքում և մեղադրանքը: Բջիջը վորպես վկաներ ցույց եր տալիս կուսանդամներին: Նրանք հայտարարում են, վոր այդ կինը հակախորհրդային տրամադրություն ունի, և վոր նրան պետք և քշել: Յերբ հարցնում են, թե ինչով կարող եք այդ հաստատել, ասում են. «Բջիջը ժողով և նշանակում շարաթ որը, իսկ նա վեր

և կենում և ասում. «Ժողովում խորհը զեկրեա  
ունի՝ շաբաթ որը վոչ մի ժողով չընշա-  
նակել»։ Բացի այդ. «Մի թուրք նվիրա-  
բերել եր 500 սուրլի։ Մենք առաջարկում  
ենք հանձնել այն ՄՈՊՐ-ին, իսկ նա հայ-  
տարարում և. «Յեկեք հատկացնենք այդ  
կուլտ կարիքներին»։

Մայկոպում, ընկ. Յերեմեյևը - գյուղա-  
տնտեսական բաժնի տեսուչ, ստանում և  
ամսական 100 սուրլի, նախկին կազակ  
խորուն ժիւղեր շացրել և կադեստակի կորպուսը,  
մորթիլի գացրի աչի չե յենթարկվել սպիտակ հերթի  
կողմից, սակայն փախել կարմիրներին մոտ։  
Կարմիր բանակում հրամկազմի մեջ և չեղել  
1919 թ. նոյեմբերից մինչև 1923 թիվը։  
1923 թվից անընդհատ աշխատում և պետ-  
ապի որգաններում, վատ աշխատող չե,  
ջանասեր և, սակայն արձակված և վորպես  
նախկին սպա։ Այդպիսի սխալների և  
այլանդակութունների որինակները քիչ  
չեն. հաճախ դրանք ընդունում են կուրյոզ  
ձևեր. որինակ. գովածներին տեղեկանք տա-  
լու դեպքում։ Հաստատվում և, վոր այս-ինչը  
խկապիս շատ լավ, հիանալի մարդ և, նվիր-

ված աշխատող եւ և հեռացված եւ խորհրդու-  
յին ապապարատի գտման հետեանքով: Մաս-  
նազետների հարցում մեր կուսակցութեան  
վերաբերմունքը հայտնի եւ Այդ վերաբեր-  
մունքը չի փոխվել, որինակ՝ աալով Շախ-  
տիի ֆւասարարութեան պատճառների դա-  
սակարգային վերլուծութեանը, կուսակցու-  
թեան կենտկոմն իր վորոշման մեջ մատնա  
նշել եւ.

«Շախտիի գործի հետ կապված փաստերը  
բաց ստիկ սրութեամբ ընդգծում են գիտու-  
թեան եւ տեխնիկայի մասնագետների ոգտա-  
գործման խնդրի բարելավման անհրաժեշ-  
տութեանը մեր արդյունաբերութեան,  
տրանսպորտի եւ այլնի մեջ: Իրա համար  
այժմ առանձնապես անհրաժեշտ եւ նրանց  
աշխատանքի ստուգումը եւ իսկապես խիստ  
պատասխանատուութեան հաստատելը նրանց  
հանձնված գործի համար, միաժամանակ  
անդադար հոգ տանելով նրանց աշխատանքի  
պայմանների բարելավման համար: Անխնա  
պատժելով չարամիտ սարոտաժնիկները ու  
ֆւասարարներին, անհրաժեշտ եւ միաժամա-  
նակ բարելավել ազնիվ, իրենց գործին

նվիրված աշխատող մասնագետներին ճնշող մեծամասնութուն կազմող մասսայի աշխատանքի պայմանները: Բարեխղճորեն աշխատող վորակյալ մասնագետներին ամեն կերպ արտադրական տեխնիկական աշխատանքի լծելուն վոչ մի դեպքում չվրտի խանգարեն նրանց մեջ գոյութուն ունեցող այնպիսի տրամադրութունները և նախապաշարումները, վորոնք տակավին հանգիսանում են անցյալի անխուսափելի ժառանգութուն, բուրժուական կարգերի մնացորդներ:

Չնայած զգալի չափով թուլացած կուսակցական և պրոֆմիութունների աշխատանքին, պայքարը սպեցակերության դեմ պետք է առաջիկայում ևս տարվի ամենայն հետևողականությամբ և կաշունությամբ: Սրա հետ միասին անհրաժեշտ է ձգտել, վորպեսզի ինժեներների և տեխնիկների հիմնական մասսաներն իրոք դառնան սոցիալիստական շինարարության ակտիվ և զիտակից ոգնականները»:

Պետապարտի ստուգման ժամանակ անհրաժեշտ է լինել հենց այս վորոշումից: Պարզելով մասնագետի կողմից վաստորեն

տարվող աշխատանքի նկատմամբ նրա բարեխիղճ վերաբերմունքը, միաժամանակ դիմակազերծ անելով կեղծ մասնագետներին՝ չի կարելի միաժամանակ զտման հարվածի տակ առնել վոչ մի մասնագետի, միայն նրա համար, վոր նա վոչ պրոլետարական ծագում ունի: Մենք ուզում ենք ընդգծել հատուկ ուշադիր վերաբերմունքի անհրաժեշտութունը դեպի նախկին սպաներն ու հին ժամանակների կամ սպիտակ կառավարությունների այլ զինվորական աստիճանավորները: Պետք է նկատի ունենալ, վոր նրանցից շատ-շատերը բարեխղճորեն իրենց նվիրել են կարմիր բանակին, իսկ նրանցից շատերն էլ կարող են ոգտակար լինել աշխատավորության գործին տպագայում ևս:

Պետք է հասկանալ, վոր անպատասխանատու պաշտոններում գրասենեկային ֆունկցիաներով հազիվ թե հնարավոր է հանդուրժել գրաֆային, իշխանական, կալվածատիրական ծագում ունեցող մարդկանց: Նրանց հեշտությամբ կարելի չե փոխարինել պրոլետարական միջավայրից դուրս չեկածներով, աշխատավոր ինտելիգենցիա-

այի և մինչև իսկ այն յերիտասարդութիան  
 շրջանից, վորը չնայած ծագումով պատկա-  
 նում և սոցիալապես մեղ անհարազատ բա-  
 նակին (որինակ, նախկին ազնվականների  
 զավակները), սակայն բավականաչափ դաս-  
 տիարակված և խորհրդային իշխանութիան  
 պայմաններում: Հեղափոխութունը վերաց-  
 րել և կոչումներն ու աստիճանները, բայց  
 նա չի փոխել դասակարգային սովորույթ-  
 ների հոգեբանությունը, այն, ինչ վոր  
 տասնչակ տարիներով արմատացել և ար-  
 տոնյալ խավերի գիտակցության մեջ: Նա  
 չի թեթևացրել, այլ, ընդհակառակը, ավելի  
 սրել և դասակարգային թշնամութունը  
 հանդեպ պրոլետարական պետութիան, նրանց  
 կողմից, ով ապրել և ոգտվելով ամեն  
 բարիքից և չի իմացել, թե ինչ բան և  
 աշխատանքը: Հեղափոխութունն ուժեղաց-  
 րել և այդ տարերքի ատելութունը դեպի  
 պրոլետարիատի գործը, և բնական և, վոր  
 այս հին սովորույթների տեր մարդկանց  
 հեռացումը պրոլետարական դիկտատուրայի  
 ապստրատից վերջինս դարձնում և ավելի  
 ստեղծագործ, ավելի քիչ յենթակա մեղ

Թշնամի ուժերի կործանիչ ազդեցութեանը: Ստուգել ապաւարատը, գարանտիա ստեղծել ապագայում նրա աղտոտման հնարավորութեան դեմ, զտվածների տեղն առաջ քաշել բանվորների յեվ գյուղացիների, ծառայողների, յերիտասարդ մասնագետների կազմեր—այս է ստուգման նպատակը:

Ի՞նչ անել նրանց հետ, վերոնց հարկ կլինի դուրս վտարել ապաւարատից:

Պրոլետարական հեղափոխութեան մեջ ուժերի պայքարի տեսակետից— իսկ այդ պայքարն առաջվանից այլ ձևերով և այլ միջոցներով է տարվում և կտարվի, քանի դեռ մնացել են դասակարգերը, քանի դեռ կան նախահեղափոխական շրջանի դասակարգերի մնացորդները, — սկզբունքորեն ճիշտ կլինեն այսպիսի պատասխանը. պրոլետարական դիկտատուրայի պետութեանը չերբեք չի խոստացել հոգ տանելու նրանց մասին, ում համար խորթ են աշխատավորների շահերը: Դասակարգային պայքարը չի ճանաչում կեղծ, ապադասակարգային դրողումներ և զգացումներ: Սակայն միանգամայն ճիշտ ընդհանուր այդ սկզբունքը,

ստուգման նկատմամբ, պետք է կոնկրետացնել: Կուլակային-ֆեոսակար տարրերի անխնա մաքրումը, նրանք, վորոնք ստորին գյուղական ապագարատում կամ բոլոր այլ խորհրդային հիմնարկներում աջակցում են «սոցիալիզմին թշնամի տարրերի» հարձակմանը—այդ անպետք խոտը պետք է դուրս գցել, առանց մտածելու նրա վիճակի մասին:

Սակայն խորհրդային ապագարատում կան և այնպիսի ծառայողներ, վորոնք պետք է փոխարինվեն բանվոր դասակարգի և խորհրդային ինտելիգենցիայի թարմ ուժերով: Դրանց պետք է հաշվի առնել: Աշխատանքի բորսաները նրանց կարող են աշխատանք տալ թեկուզ վերջին հերթին, ստուգման ժամանակ հաշվի առնելով նրանց հեռացման պատճառները: Աշխատելու իրավունքը խորհրդային սիստեմի հիմունքն է: Հեղափոխությունը հարկադրեց աշխատելու և նրան, ով ապրում էր բանվոր դասակարգի անլուր շահագործումից քամած հավելյալ արժեքի հաշվին: Վոչվոք խորհրդային ապագարատի ստուգման և ամ-

բացման հեռականքով չի զրկվում աշխատելու իրավունքից: Վճարանց հնարավոր կլինի փոխադրել մի պաշտոնից գեպի մյուս, ավելի ստորինը:

Ձե՞ վոր վոչ միայն մեզ դասակարգայնորեն-թշնամի տարրերն են խախտում և կարող են քայքայել խորհրդային քաղաքականության գիծը հնգարավոր գործնական աշխատանքներում, այլև անուղղելի բյուրոկրատները, ձգձգողները, կազմավուծվածները թե անկուսակցականներից և թե կուսակցականներից (վերջիններիս պետք է շոշափի վոչ միայն կուսակցության, այլև պետապարատի գտումը): Խորհրդային ապարատում նրանց աշխատանքից ազատելը չի նշանակում աշխատելու իրավունքից զրկել, այլ՝ պահել բավականին հեռու խորհրդային ապարատից: Պետական խորհրդային ապարատում աշխատելուց բացի գոյություն ունի ոգտակար աշխատանքի այլ հարյուրավոր ասպարեզ, վորտեղ կարող են ավելի շուտ վերադաստիարակվել կամ, համենայն դեպս, ոգտագործվել նրանցից շատերը, վորոնց ներկայությունը պետապարատում փստ և բերում:

Անվիճելի է, ՎՍՍՀՄ-ի ղեկավարները Վոլոդյա Կոնյաևի նկատմամբ պրոֆմիտեթյունների առաջ ծառանալու յե նրանց միության մեջ թողնելու նպատակահարմարության հարցը: Այս հարցն անհրաժեշտ է հիմնավորապես քննել և նախապատրաստել:

## ԱՌԱՋ ՔԱՇԵԼ ՆՈՐ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԶՈ- ԿԱՏՆԵՐ

Արհմիությունների VIII համագումարը, նկատի ունենալով ապագարատի առաջիկա ստուգումը, մատնանշեց.

«Պորհրդային ապագարատի առողջացման աշխատանքների հետ արհմիությունների առաջ ծառանում են պետական, տնտեսական յեվ կոոպերատիվ ապագարատի մեջ առաջադաման բարդ խնդիրները, բանվորներին, բանվորուհիներին, յերիտասարդությանը յեվ ծառայողներին, հատկապես հասարակական աշխատանքներում ակտիվ մասնակցություն ցույց տվողներից, մասնավորապես խորհրդի սեկցիաներում, խանութային հանձնաժողովներում, ուսումնասիրող խմբակներում, ԲԳՏ-ի բո-

ղորնների բյուրոններում յեւլ ալլն—տոաջ քաշելու միջոցով»:

Առանց գտման յենթականերին փոխարինողներին կազրեր պատրաստելու—անհնարին եւ ապագարատի ամբացման հասնել: Առաջքաշման համար նախապատրաստութիւնը պետք եւ տարվի գտման նախապատրաստութեան հետ գուգընթաց: Պրոֆ-միութիւնները, կուսակցութիւնը—բանվորական մասսաների, նրանց ստուգման միջոցով—պետք եւ առաջ քաշեն առաջավոր բանվորներին պետապագարատի, կոոպերացիայի եւ տնտեսական աշխատանքի մեջ:

Բանվորներին պետական աշխատանքի ներգրավելը շարունակ կուսակցութեան եւ արհմիութիւնների կարեոր եւ հարատե խընդիրն եւ չեղել: Յեւլ այժմ, ապագարատի անձնական կազմի ստուգման հետ միաժամանակ, առաջքաշումն ապագարատի ամբացման գլխավոր լծակն եւ: Այնտեղ, ուր արհմիութիւններն ու կուսակազմակերպութիւնները պատրաստված չեն, վորպեսզի տասնչակ ու հարչուրավոր նոր աշխատողներ առաջ քաշեն, այնտեղ չի կարելի գտման

անցնել, քանի վոր նա անհաջողության կմատնվի, ոգուտի փոխարեն վնաս կբերի, վորովհետև կարող ե խորտակել ասպարատի գոծունեյությունը: Յեւ զա հենց գործնականում ել տեղի յե ունեցել. այսպես, Ռւսպանից, Տուլայից ե մի շարք ալ վայրերից հաղորդում եյին, վոր, առաջ քաշման գործի անպատրաստ լինելու շնորհիւ, աշխատանքը գտումից հետո մի շարք հիմնարկներում կաղում ե, քանի վոր վտարվածներին փոխարինողներ չկան: Առաջ քաշման գործը մեզ մոտ առանձնապես նըպատատավոր դրության մեջ չե: Մենք ասպարատի հսկայական ասպարեզներ ունենք, ուր ամբողջ տարիներ նոր բանվոր աշխատողների հոսանք չի յեղել: Մոսկվայում պետհիմնարկներում գրազված 210.755 ծառայողներից (առ. 1 հունվ. 1928 թ.) առաջ քաշված բանվորները միայն մի տոկոս են կազմում:

Բանվորական կենտրոն — Բըյանսկում, մամուլի հաղորդագրության համաձայն, վերջին ամիսներում միայն յերկու հոգի յեն առաջ քաշված ասպարատի մեջ: Տու-

լայում յերեք տարվա մեջ յերեք հիմնարկում առաջ և քաշված ընդամենը 26 բանվոր 1.515 ծառայողի գիմաց: Մոսկվայի նահանգային ապահովագրութւան մեջ յերեք տարվա ընթացքում առաջ են քաշված չերկու բանվոր՝ 457 ծառայողի գիմաց, իսկ Ռոստովի պետապում՝ 245 ծառայողի գիմաց՝ մեկ առաջքաշված, և նա յել պատրաստում և փախչելու վարչութւան կողմից ցուցարարված անտանելի վերաբերմունքի հետեւանքով: Ցենտրոսոյուզում 2 հազար հոգուն ընկնում և ընդամենը 11 առաջքաշված: Կալուգայի նահանգում ստուգված հազար ծառայողներից ընդամենը 52-ն են առաջքաշվածներ («Наша Газета»-ի հաղորդագրությունից): Տվերում հինգ տարվա մեջ նահանգային հարկային ապպարատի մեջ 9 առաջքաշվածներ են մտցված: Պետհարկի ապպարատում (ՌՍՖՍՀ-ի ՖՓԿ) կա մի առաջքաշված, գյուղացի և վոչ մի բանվոր: Մոսֆինրաժնի բոլոր ապպարատներում ռայֆինրաժնիներին և հարկային թաղամասերի հետ միասին — ընդամենը 46 առաջքաշվածներ:

ՌՍՖՍՀ-ի ներքոյն ժողովուրդագրութեան 12 առաջ քաշվածներ կան, վորոնցից 10-ը կոմսունիստներ են. զբանցից փաստորեն ներկայումս աշխատում են միայն չերկուսը. ֆնացածները չես են ուղարկված իրենց տեղերը: 1926 թվից դեսը վոչ մի առաջ քաշում չի կատարված:

Ֆինստղովումատում 22 առաջ քաշվածներից 21-ը կոմսունիստներ են. բոլոր առաջ քաշվածներն ընդունվել են 1926 թ. հոկտեմբերից առաջ, և զբանից դեսը մինչև 1928 թ. դարունը վոչ մի նոր առաջ քաշված չի ընդունվել: 1928 թ. մարտին Մոսկվայի կոմիտեն ուղարկել է 3 առաջ քաշված, Մոսկվայի խորհրդի սեկցիայի անդամներ:

ՌՍՖՍՀ-ի Առժողովումատում աշխատում են 10 առաջ քաշվածներ, բոլորն էլ կոմսունիստներ. սկսել են աշխատել 1921—25 թվերից՝ 1925 թվից դեսը վոչ մի առաջ քաշված չի ընդունվել:

ՌՍՖՍՀ-ի Ֆինստղովումատում ընդամենը 6 հոգի առաջ քաշվածներ կան, այսինքն ամբողջ աշխատակիցների 1,1<sup>0</sup>/<sub>0</sub>-ը, ՌՍՖՍՀ Հողժողովումատում—9, այսինքն 1,4<sup>0</sup>/<sub>0</sub> և այլն:

Այսպես և առաջ քաշման հարցի բավականին անմխիթար վիճակը: Այս բոլորին պիտի ավելացնել առաջ քաշմանն ուղեկցող մի շարք բացասական յերևույթներ, վորն արտահայտվում և բանվորների ակախիվ մասնակցության բացակայութչամբ առաջ քաշման գործի մեջ, ավելի հաճախ առաջ են քաշում իրենք վարչական կազմը, բջիջները, գործարկումները, իսկ բանվորները վոչինչ չեն իմանում և հաճախ այդպիսի առաջ քաշումներին բացասաբար են վերաբերվում:

Ընկնելով հիմնարկը, առաջ քաշվածը հանդիպում և ձևական վերաբերմունքի դեպի ինքը. ուսուցում, դաստիարակություն, ոգնութչուն չի ստանում. այս բանն առաջ քաշվածին հաճախ հուսահատութչան և հասցընում, և նա գցում և հիմնարկը և նորից անցնում արտագրութչուն: Արհմիութչունները դեռևս բավարար չափով չեն ծավալել բանվորներին պետապարատի մեջ առաջ քաշելու համար նախապատրաստման և իրագործման աշխատանքը: Շատ են խոսում առաջ քաշման մասին, քիչ անում յեվ ավելի քիչ ոգնում արդեն առաջ քաշվածին:

Այս բայը վճռականորեն պետք և վերացվի  
 Ապագարատի կոմսուլեկտացման, նրա ամ-  
 բացման հետևյալ աղբյուրը ԲՈՒՀ-երը,  
 ԲՏՈՒՀ երը ավարտած չեղիտասարգությու-  
 նըն և: Վերջին 5 տարվա մեջ 45 հազարից  
 ավելի մարդ և վերջացրել մեր ԲՈՒՀ-երն ու  
 ԲՏՈՒՀ-երը, սակայն ստուգումից պարզ-  
 վում և, վոր բավականին աննշան թիվն և  
 գործադրել իր ստացած գիտությունը գործ-  
 նականի մեջ, իր այդ գիտությունը փորձով  
 ամբացնելով և ճոխացնելով: Մեր աշխրոր-  
 սաներում տակավին շատ ԲՈՒՀ-եր և  
 ԲՏՈՒՀ-եր վերջացրած չեղիտասարգու-  
 թյուն և սպասում «պլանային» բաշխ-  
 ման: Մոսկվայում 1929 թ. հունվարին չե-  
 դած 260 չեղիտասարգ մասնագետներից մի  
 շարք ամիսներ ընթացքում տեղավորված  
 են միայն 20 ը: Յերբեմն ևլ հնպես և լի-  
 նում, վոր այս կամ այն հիմնարկում ստու-  
 ժավորումը վերջացնելուց հետո «ստաժիժա-  
 մանակը լրանալու հետևանքով» հեռացվում  
 են և արձանագրվում աշխրորսացում: Պարզ  
 և, վոր կրթված չեղիտասարգության ող-  
 տագործման գործին անհեթեթ և հանցա-

վոր այս վերաբերմունքը արմատապես պետք է փոխվի:

Սակայն գլխավորը — բոլոր այս կամ այն մասնագիտութունը սովորածներին հայտնաբերելն է: Պետք է հաշվի առնել ապրաքատի և արտադրության համար աշխատողների կարիքը և ուղղել դրանց այնտեղ, ուր նրանք կարող են պրակտիկա ձեռք բերել և ոգտակար գործ կատարել: Կոնտրոլի տակ պիտի առնել նրանց աշխատանքը, նրանց ճիշտ առաջխաղացումը ծառայության սանդուղքով, վորպեսզի արգելելով «կանգ առնելը» միաժամանակ և այնպես «առաջ չըքշել», վորպեսզի մարդը առանց գործնական փորձառության, միանգամից աշխատանքի այնպիսի բարդ ֆունկցիա ստանձնի, վոր իրականում թղթի մասնագետի կամ դիյետանտի չփոխվի: Այս բոլորն առաջին հերթին ընկնում է պրոֆմիտությունների վրա:

Պետապաքաատում աշխատելու համար, նոր պրոլետարական կադրերի առաջը աշման խնդիրը, վորոնք փոխարինելու յին զըտվողներին, — վիթխարի չէ: Դա կարելի լուծել միմիայն կուսակցության և տրհմիություն-

ների միահամուռ ուժերով: Մեզ հալանում են, վոր միմիայն Հյուսիսային Կովկասում ստուգումից հետո ապագարատից հեռացվածների փոխարեն անհրաժեշտ և պատրաստել 12 հազար առաջաշվածներ:

Կուսակցութւան Կենտկոմի 1928 թ. նոյեմբերյան պլենումում արդեն տրված եմոտակա ժամանակում պրոլետարական դիկտատուրայի ամրացման գործի հիմնական դիրքավորումը: Բանվորներին և չքավորաբարակային մասսաներին պետութւոնը դիկավարելու գործում լայն մասնակցութւան ներգրավել, — ահա այս ասպարիզում ամբողջ աշխատանքի հիմքը: Սորհուրդների վերընտրութւան հետ լայն բազայ ստեղծվել բանվորներին կառավարելու գործի մեջ ներգրավելու ուղղութւամբ: Այսպես, Լենինգրադում հազարից ավելի նոր բանվորներ ու բանվորուհիներ, վորպես պատգամավորներ, ընդհուպ մոտեցված են կառավարելու գործին: Դրանցից հնարավոր կլինի շատերին վերցնել մշտական աշխատանքի:

«Միմիայն ընտրու դասակարգի թարմ և

միաժամանակ լաջն կաղերբին այդպիսի մասսայորին պետական ֆունկցիաների կատարման մեջ ներգրավելով և, վոր պետապարատն սատիճանարար կազատվի բյուրոկրատիկ տարրերից: Հենց սրանումն և մեր կուսակցության կարևորագույն խնդիրներն են, մեկը վորպես պրոլետարական դիկտատուրայի իսկական ղեկավարի»:

Ահա կենտկոմի նույնմբերյան պլենումի այս վորոշումը պիտի ղեկավարող սկզբունք հանդիսանա ապարատի անձնական կադմստուղելիս:

### Ուժեղացնել կոմմունիստների ղեկավարությունը:

Յեթե մենք անդրադառնանք Շախտիի գործի տխրալի դասին, կարևորը, վոր պիտի հասկանալ դրա մեջ, այդ այն և, վոր բանվոր դասակարգի առաջավոր ներկայացուցիչները, այսինքն տնտեսական և արդյունաբերական աշխատանքի առաջավոր դիրքերում դրված կոմմունիստները, տիրապետելով «կառավարելու արվեստը», միանգամայն չեչին կարողացել տիրապետել իրենց հանձնված գործին այն չափով, վորպեսզի իրապես լիակատար տի-

րութիւնն անեկին իրենց հանձնված գործա-  
րաններին, շախտաներին, տրեստներին:

Շախտի գործի առթիվ կենտկոմի վորոշ-  
ման մեջ կարգում ենք.

«Հանձինս Դոնբասսի որինակի տեսնում  
ենք, վոր մեր ձեռնարկութիւններից շա-  
տերում զեկավարների դերը մինչև որս զե-  
րազանցապես մնում ե վորպես արդյունա-  
բերութիւն մեջ վատ կոմիսսարի դեր, աչս-  
ինքն, իսկական զեկավարութիւնն վոխա-  
րեն, ձեռնարկի զեկավարութիւնը հանգում  
ե աչսպես կոչված «ընդհանուր զեկավարու-  
թիւնն»: Փոխանակ մասնագետների աշխա-  
տանքն ստուգելու և միատեղ աշխատանքի  
ժամանակ սիստեմատիկաբար սովորելու,  
իրենց արտադրական-տեխնիկական վորա-  
կի բարձրացման ուղղութիւնը չաշխատող  
տնտեսավար-կոմմունիստները հաճախ տա-  
ծում են կուլը հավատք զեպի նրանց  
աշխատանքը:

Փոխանակ արթուն հսկողութիւն և մաս-  
նագետների նկատմամբ նրանց կողմից  
տարվող աշխատանքի խստիվ պատասխա-  
նատվութիւն իրագործման, զերակշռումե

պատրաստի ծրագրերի և առաջարկների հաստատումը, առանց ստուգման: Վորպես կանոն, բացակայում է հաստատված պլանների ստուգումն ու կատարումը: Փոխանակ ուշադրւր ընտրութ՛յան և լավագուշն վորակով ու աշխատանքի մեջ ստուգված մասնագետներին գործնական աջակցութ՛յուն և մշուս կողմից անբարեխիղճ և սարտաժնիկ տարրերի դեմ վճռական և սխտեմատիկ պայքար մղելու, տեղի չե ունենում անուշադրութ՛յուն դեպի այս կարևոր խնդիրը: Փոխանակ արտադրութ՛յանը նվիրված մասնագետների աշխատանքների համար նպաստավոր հասարակական պայմաններ ստեղծելու, ընդհակառակը՝ տեղի չի ունենում բարեկամութ՛յուն դրանց առանձին խմբերի հետ, կենցաղային «ընկերական» կապի վրա (միատեղ կերուխում, քաղքենիական վերաբերմունք դեպի նրանց աշխատանքի գնահատականը և այլն): Այդ դրութ՛յան անհանդուրժելիութ՛յունն զգացվում է առանձնապես ներկամոմենտում, յերբ անտեսական շինարարութ՛յան թափը, մասնավորապես կապիտալ աշխատանքների թափը հակառական շափե-

րի յե հասել: Ներկա պայմաններում տնտեսավարներին անձանոթութունը ձեռնարկության արտադրական-տեխնիկական կողմին, նրանց հաճախակի տեղափոխելը Վր աշխատանքից մյուսը, վոչ-արտադրական բնույթ կրող գործերով ծանրաբեռնված լինելը (հաշվետվութուններ, ղեկուցումներ, գործուղումներ կենտրոն) և տնտեսավարներին կոմիտասարների փոխող այլ պայմաններ, վոր չի համապատասխանում իրենց հանձնրված իրական գործին—նման հանգամանքներ, վորոնք առանձնապես անթույլատրելի յեն: Միաժամանակ, կարմիր մասնագետների հոսանքը դեպի ձեռնարկները ևս միանգամայն անբավարար ե: Արտադրութւան մեջ յերիտասարդութունից յեկած կարմիր մասնագետները հաճախ հանդիպում են բացարձակ թշնամական վերաբերմունքի հին մասնագետների կողմից: Մյուս կողմից ոտարերկրյա մասնագետների և արտասահմանյան տեխնիկական ոգնության ոգտագործումը նույնպես կատարվում ե անբավարար ղեկավարությամբ ու հսկողությամբ\*):

\*) Կենսակամի 1928 թ. 11 ապրիլի վորոշումը:

Բայց դեռ կենսակամի սուշն վորոշումից շատ առաջ, 1922 թ. ապրիլին, չեբբ Լենինը ՆԵՊ-ի առաջին արդյունքներն եր ամփոփում, նա մատնանշում եր այն, թե ինչ պիտի լինի կոմմունիստների դերը տնտեսական և արդյունաբերական շինարարութիւն մօջ: Լենինը հայտարարում եր.

«Սրա վրա (կարենալ տնտեսել և տիրապետել սմեն մի գործի գործնականին— Գ. Լ.) հարկավոր ե դարձնել մեր ուշադրութիւնը, չհանգստանալ նրանով, վոր ամենուրեք պետական տրեստներում ու խառն ընկերութիւններում պատասխանատու և լավագոյն կոմմունիստներն են— դրանից բան դուրս չի գա, քանի վոր նրանք (տնօրինել) տընտեսավարել չգիտեն, և այս տեսակետից նշանք խոշոր գործարանի և խոշոր ֆիրմայի դպրոցն անցած շարքային կապիտալիստական գործակատարից վատ են: Այս բանը մենք հաշվի չենք առնում, այստեղ մնացել ե կոմմունիստական սիստեմարծութիւնը— կոմսնապարծութիւնը, արտահայտված ոռեսական մեծ լիզվով»\*):

\*) «XI համագումարի սղագիր հաշվետվութիւնը», էջ 16:

Մատնանշելով այնուհետև, վոր մենք սովորել ենք քաղաքականութիւնն վարելը, տիրապետում ենք ընդհանուր ղեկավարութիւնն արվեստին, վոր մեզ պետք է սովորել առևտուր անել, տնտեսավարել, գործնականորեն իմանալ այս կամ այն աշխատողի ղեկավարութեանը հանձնված ամեն մի գործ, — Լենինը հանդուժ էր այն յեղրակացութիւն, վոր «խնդրի առանցքը մարդկանց մեջ է, մարդիկ ընտրելու մեջ» (հատ. XVІІ, մաս II, հջ 4): Վերջին 5—7 տարվա շինարարութեան ընթացքում կոմմունիստները մի շարք բնագտնութեան, գրանց մեջ և արդյունաբերական ապագարատում ջոկված, ընտրված են, շատ բան են սովորել, իսկ ստուգման ժամանակ յերկաց, վոր ընտրողութեանը և սովորելը բավարար չեն, չեն ապահովում մեզ թշնամու վտանգութեաններին, վերջինիս կողմից իր գիտութեանը մեր դեմ գործադրելու: Մեր աշխատողները դեռ չեն կարողացել այնպես տիրապետել տնտեսութեանն ու արդյունաբերութեան ղեկավարութեանը, վորպեսզի կարողանան խփել վնասարար-

ներին, մերկացնել մեզ անհարազատ մասնագետին, կարողանալ տարբերել աչքին թող փչող և կեղծ մասնագետին բարեխեղձ աշխատողից և իսկապես իմացող մասնագետից, և վնասարարներն այս բանն ուտագործել են մեր դեմ:

Սա այն գլխավոր դասն է, վոր կուսակցությունը քաղեց Դոնբասսի պատմությունից: Այստեղից էլ կարևոր հետևությունն այն է, վոր կոմմունիստները գործնականորեն այնպես պիտի տիրապետեն իրենց հանձնված աշխատանքի բնագավառը, վորպեսզի, մեր ապալարատի առողջ դասակարգային կադրերի վրա հենվելով, կարողանան ժամանակին նախազգուշացնել թույլ չտալ նրա մեջ դասակարգային խեղաթյուրումներ:

Ներկայումս աջ թեքումի վտանգը ճանաչված և հիմնական վտանգը, վորի դեմ է ուղղված կուսակցության իդեոլոգիական պայքարի գլխավոր կրակը: Նա — այդ աջ ուղղությունը — իր արտահայտությունն է գտնում նրանում, վոր կոմմունիստները հաճախ ժամանակին չեն կարողանում հազ-

կանալ, ըմբռնել ապպարատի գործնական  
 աշխատանքում նկատվող կամ տարվող թե-  
 բույնները: Գործնականում դա շատ բանե-  
 րի մեջ և արտահայտվում: Բերենք թեկուզ  
 այսպիսի մի որինակ: Կուսակցությունն իր  
 XV համագումարում նշել և կուլակի դեմ  
 տնտեսական պայքարի վճռական քաղաքա-  
 կանություն, գյուղի ուռճացած մասի տըն-  
 տեսական թուլացում, ամեն կերպ աջակ-  
 ցություն չքավորությանը, ոգնել չքավո-  
 րության կողիկտիվացմանը, միջակի հետ  
 դաշինքն ամրացնել, — մինչդեռ իրականում  
 ապպարատը հաճախ քաշում և ալն կողմը,  
 վոր գյուղատնտեսական մեքենաների բաշ-  
 խումը ձգտում և կատարել ունեոր տնտե-  
 սությունների մեջ՝ կրճատելով չքավորու-  
 թյան բաժինը: Կոմմունիստներն ևլ համա-  
 ձայնվում են դրան, այդպիսով գերի ընկ-  
 նում ապպարատի ձեռքը, վորը քաշում և  
 դեպի բուրժուազիայի կողմը: Սակայն վոչ  
 միայն քաղաքականության մեջ, գործնա-  
 կանում ևս կոմմունիստները հաճախ դի-  
 ջում են դիրքերը գործը լավ չհասկանալու  
 կամ թե խորթ ազդեցություններին դիմա-

դրել անընդունակ լինելու պատճառով: Իսկ հաճախ ել նրա համար, վոր իրենք կոմմունիստներն ապապարատի բյուրոկրատիկ ադդեցությանը չենթարկվելով՝ չերբեմն իրենք ել սարսափելի չինովնիկների և ձգձըգողներին չեն փոխվում:

Բյուրոկրատիզմի դեմ պաշքարելու գործում կումմունիստների դերի մասին Լենինը շատ անգամ և ասել, մտրակելով նրանց, ով այս գործում ակախվություն չի հայտնարերում, հարձակվելով նրա վրա, ով ինքն և վոլոկիտա ստեղծում: 1921 թ. կուսկոնֆերենցիայի յեզրափակման խոսքում, նշելով ձգձգումների կոնկրետ փաստը, Լենինն ասում եր.

«Յերբ մենք կովում ելինք Գենիկինի դեմ, մենք դատարկ ձեռներով չեյինք գնում նրա դեմ, այլ ամուր զինվում և բահակ կազմակերպում... Յեթե մենք այդպես առաջ գնանք, ապա մենք կհաղթենք այս կովում ել, չնայած այս կոիվն ափլի դժվար և, քան քաղաքացիական կոիվը»:

«Զե՛ վոր դուք կոմմունիստներ եք, ինչ՞եւ այդ պարոն բյուրոկրատներին»

թակարդով չեք բռնում և ժողդատարանի առաջ կամ բանտ չեք քաշում ձգձըգումների համար»:

Այնուհետև նա հարց և դնում այն մասին, թե ինչպես են պայքարում և մինչև վերջը հասցնում այդ պայքարը ձգձգումների դեմ կոմմունիստները. «Իսկ դուք, ընկերներ, դիտակից կոմմունիստներդ, ի՞նչ եք արել դրա դեմ պայքարելու գործում»:

Մի շարք փաստաթղթերում (նամակ Մյասնիկովին, քաղլուսվարների համագումարի ճառը և այլն) Լենինը հանդամանորեն կանգ է առնում քյուբոկրատիզմի դեմ պայքարում կոմմունիստների դերի վրա:

«Մեզ մոտ կոմմունիստները, կեսից վոչ պակասը, պայքարել չեն կարողանում, չխոսելով արդեն նրանց մասին, վորոնք խանդարում են պայքարելը (հատ. XVIII, մ. I, էջ 383):

Կոչ անելով դատապարտել այն կոմմունիստներին, վորոնք չգիտեն պայքարել ձգձգումների դեմ, Լենինը գանում է, վոր այդպիսի կոմմունիստն ամենից վատթար «նեբրին» թշնամին է, և վոր «այդ թշնա-

մուց մենք պիտի աղատվենք և բոլոր զիտակից բանվորների, և գյուղացիների միջոցով մենք դրան կհասնենք» (Հատ. XVIII, մ. II, էջ 15):


Ահա թե ինչու ինքնըրտախնայան ապարատի գտումը նրան աղտոտող տարրերից միայն գործի կեսն և, չեթե դրա հետ միաժամանակ չբարձրացնենք կոմմունիստներին աշխատանքի վորակը, ինչպես նրանց շեկավարող դերի, նույնպես և փաստորեն նրանց կատարած գործի մեջ:

Կուսակցութեան գտումը, վորն արդեն կատարվում է, վորոշ չափով կգա լրացնելու ապարատի գտումը: Նա կհասնի այն կոմմունիստներին, վորոնք կազմալուծված լինելով, կամա թե ակամա ոգնում են ապարատի աշխատանքի մեջ «ցած սողալուն», վորոնք մեզ համար այլևս անհուսալի յեն վորպես բյուրոկրատներ և ձգձգողներ, վորոնք, ինչպես դա հատկապես գյուղերում է լինում, «աղբերացել» են կուլակային տարերքի հետ և համերաշխ են աշխատում ապարատի մեջ վտարման յենթակա այդ մասի հետ:

Սակայն խորհրդային ապագարատի գտումն  
ինքնըստինքյան դեռ չի վորոշում նրա  
կուլտուրական մակարդակի բարձրացման և  
աշխատանքի տեսլի և վորակի բարձրաց-  
ման խնդիրը: Հենց գտման ընթացքում և  
նրանից հետո ևլ առանձին ակադեմիկոսներ  
պետք և տարվի պաշարը բյուրոկրատիկ  
խեխտիթյուրումների դեմ:

Բարձրացնել ապագարատի մեջ աշխատող-  
ների պատասխանատվությունը, ուժեղաց-  
նել աշխատանքային դիսցիպլինան, նըշ-  
տորոշել ապագարատի մեջ յուրաքանչյուրը  
աշխատողի պարտականությունները, ա-  
վելի շատ պահանջել ապագարատում գոր-  
ծողների վորակի նկատմամբ, ստեղծել  
բանվորական մասսաների սիստեմատիկ  
հսկողությունը ապագարատի բոլոր ողակ-  
ների գործունեյության վրա՝ գործադրելով  
նոր ձևեր, թեկուզ հենց ժամանակավոր  
բանվորական վերահսկիչ հանձնաժողովները  
ժողովմասաներին և հիմնարկներին կից,  
դրանց աշխատանքի նկատմամբ պարբե-  
րական հսկողություն սահմանելով բան-  
վորական մասսաների կողմից, խոշոր

տրեստներին և ծեռնարկներին կից ԲԳՏ սեկցիաներ հիմնելով, կազմակերպելով առաջընթացական անընդհատ պատրաստումը և նրանց ապագարատի մեջ անկացնելը— ահա այն միջոցները, վորոն պետք է ամրացնեն ապագարատում ծառայողների կազմի զտումը և ամրապնդեն պրոլետարիատի դիկտատուրան:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0044833

[204.]

A  $\frac{1}{8185}$

**Р. Лебедь**  
Укрепление пролетарской  
диктатуры



ԳԻՆԸ 25 Կ.